

սախ տրամադիծ ունի . բայց երկիրն մշակութիւնը ամենևին չէ փոխուած :

Քիղոյի , մօտերն է սուրբ Պօղոս լիճը մշակուած ձորի մը մէջ որ ծովուն երեւ աէն 2762 մէդր բարձր է . լիճը և երկրին մշակութիւնը երկար ատենէ ՚ի վեր փոփոխութիւն մը չեն կրած :

Ուրեմն այն երկիրները ուր մշակութիւնը և անտառները չեն փոխուած , ճերուն գիրքը և ձեւ հաստատուն մնացած են : Դիտենք հիմա թէ ի՞նչ կը հանդիպի մշակութեան փոփոխութեամբ :

1555ին Վալէնցիա լճէն 2000 մէդր հեռու տեղ մը հիմնուեցաւ Նուէվա Վալէնցիա քաղաքը : 1800ին Հիւմագորդ աս երկիրը պարտելու ժամանակ քաղաքը լիճն 5260 մէդր հեռուն գրտաւ . յրերը ցածցեր էին . քանի մը կղզիներ որ կը յիշուէին հին նկարագրութեանց մէջ՝ պատի լեռներ դարձեր էին , և այն տեղուանքը ուր ատենաք բան մը չկար , կղզիներ կը տեսնուէին , վասն զի երկրին անտառները չնշուեր էին : 1825ին , 25 տարի վերջը Պ . Պուսէնկոն տեսաւ որ լիճը նորէն իր առջի լայնութիւնը առնելու վրայ էր , բայց մշակութիւնը երեսէ ձգուելով քաղաքական պատերազմներու պատճառաւ երկիրը նորէն անտառացած էր :

Նոր կրանատայի մէջ Ռապադէ քաղաքը 18երորդ դարուն մէջ լիճ մը եղերդներն էր . անկէ ՚ի վեր յրերը քաշուեցան և լիճը երկուքի բաժնուեցաւ մօտակայ երկիրներուն ծառերուն կրտրուելով : Նոյն ձորին մէջ է քէքընէ լիճը որուն երկայնութիւնն էր 16երորդ դարուն մէջ 10 փարսախ և լայնութիւնը 3 փարսախ . իսկ 1825ին փարսախ մը երկայնութիւն և $\frac{1}{2}$ փարսախ լայնութիւն ունէր միայն :

Համբարձման կղզւոյն մէջ ճանապարհորդները գեղեցիկ աղբիւր մը տեսած էին ծառերով ծածկուած լերան մը ստորոտը . լերան ծառերը կտրուելին վերջը աղբիւր կը ցամքի . քաղաքական պատերազմներու ժամանակ մշակութիւնը երեսէ ձգուելով , ծառե-

րը նորէն կը մեծնան և աղբիւրը դարձեալ կը տեսնուի :

Պարոն Պուսէնկոն 1825ին Բոբայեան գաւառին մէջ մետաղաց գործարան մը հաստատած էր , և մօտ լեռնէ մը իջած յրերը մեքենայից շարժմանը կը դորժածէր . դորժարանը երթալով ծաղկեցաւ , տեղոյն բնակիչները շատնալով սկսան երկիրը մշակել . Երկու տարի վերջը ծառերը բոլորովին կտրուեցան , բայց յրերն ալ քիչնալով՝ ալ բաւական ուժ չտնէին մեքենաները դարձնելու :

Այս ամեն դիպուածներէս կրնանք հետեցընել՝ թէ անտառներուն վերցուելով յրոյ դոլորշիացումը աւելի դիւրութեամբ կ'ըլլայ , միւս կողմանէ ալ յրոյ դոլորշեաց խոտացումը և կամ ըսեմ անձրենները խիստ անկանոն կերպով մը կու գան և երկիրը կ'աւրըշտըկեն , իսկ անտառայից երկիրներուն մէջ , անձրեաց յրերը հողին երեսը կը կենան , և պայծառ գիշերաց ժամանակ՝ ծառերուն տերենները գիշերուան ճառագայթման պատճառաւ պաղելով՝ օդին մէջ զրտնուած յրոյ դոլորշիքը կը խտացընեն : Ուրեմն ծառերը իրենց ներկայութեամբ ըստ օդին մէջ գտնուած յրոյ դոլորշիքը կը պակսեցընեն , անձրեններուն սաստկութիւնը կը չափաւորեն , որով յրերուն վազուածքը միակերպ կ'ըլլայ , երկրին տակնուվրայ ըլլալը կ'արգելեն և գետակներուն աւազով լեցուիլը կ'ուշացընեն :

ՀԱՄԱՌՈՅՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Քաղդէացոց հին դպրուքեանը վրայ .

Ինչպէս յայտնի է ամենուն՝ ընդհանուր մարդկութեան հարկաւոր եղած գիտութիւնները , յրենեղեղէն ետքը մասնաւորապէս նոյենայ տանը և իր ազգաւոհմին մէջ անկորուատ մնացին . ուրոնցմէ տարածուեցաւ այն ամեն աղքաց մէջ՝ որոնք իրենց բնակութիւնը

Սենարայ դաշտը և անոր սահմանացը մէջ հաստատեցին . որով եղան նաև մարդկութեան զարմին խանձարուղքը : Տարակոյս չկայ թէ այն ազգերը որոնք խաղաղութեամբ իրենց երկրին ու տանը մէջ առանց տեղափոխութեան կ'ապրէին՝ աւելի ևս միջոցներ ունեցեր են զարգանալու 'ի գիտութիւնս և անկորուատ պահել զայն ազատ մալով այն տղէտ և վայրենութեան վիճակէն , որուն մէջ չատ ազգեր ու ժողովուրդներ ինկան լեզուաց խառնակութենէ , ու ասդին անդին ցրուելէն ետքը : Այս դժբաղդ վիճակէն ազատ մնացին Բարելացիք , ինչպէս նաև Քաղդէացիք՝ որոնց նախահայրը ու թագաւորը եղաւ Ներովթ կամ թէլ՝ այն միջոցին երբ այլ և այլազգեր խուռն բաղմութեամբ անձանօթ ու հեռաւոր աշխարհներ ցրուեցան :

Բայց որ ցաւալին է և մեծ ամօթոյ արժանի , ուրիշ գիտութենէ կամ գաղափարէ առաջ՝ Աստուծոյ գերագոյն էին ծանօթութիւնը մոռցան քննելու , որով բարուղին մոլորած՝ սկսան սուստաստոց երկրագագութիւն և պաշտօն մատուցանել : Այս մոլորութեան մէջ ինկան նաև Քաղդէացիք՝ որոնք երկնային մարմնոց դիտողութեանցը զբաղած և բոլոր խելքերնին անոնց տրած՝ այնչափ հեռացան ճշմարիտ Աստուծմէ , որ աստղերուն ամեն մէկը զատ զատ մէյմէկ աստուած կարծեցին և բացարձակ իշխող և տիրապետող աշխարհիս : Թէպէտ և ուրիշ կողմանէ երենք ալ կը խոստովանէին որ այն իրենց աստուած կարծած աստղերն ալ գերագոյն էակէ մը ստեղծուած ըլլան . ինչպէս նաև արեգակը և լուսինը զորոնք Աստուած իրեն անձնական ծառայութեանը համար ստեղծած ըլլայ կ'ըսէին , որով և կը հետևեցրնէին թէ ուրեմն անոնց ալ ըստ արժանւոյն պէտք է պատիւ և յարգութիւն ընել երկրագութեամբ և աղօթիւք իրեւ պաշտօնէից Աստուծոյ և սիրելեաց նորա : Այս տեսութեամբ և սկզբունքներով՝ սկսան մեծամեծ մեհեաններ շինել յանուն

այլ և այլ մոլորակաց և անխտիր զոհ մատուցանել և երկրպագութեամբ պաղատանկ ընել՝ որոց բարեխօսութեամբ կարծէին չնորհաք ընդունել որ ապահով զամանակ է մէջ Աստուծոյ և մարդկան միջնորդ մը ըլլալ , վասն զի ամեն մարդ իրնուաստութիւնը ճանչնալով՝ չէր համարձակեր ուղղակի առ Աստուծութիւնը մել որ սրբութեամբ գերազանցեալ է և Արարիչ ամենեցուն : Ասկէ ուրեմն կը հետեցնէին թէ անհրաժեշտ հարկաւորութիւնն կամ միջնորդի մը ըլլալ , վասն զի ամեն մարդ իրնուաստութիւնը ճանչնալով՝ չէր համարձակեր ուղղակի առ Աստուծութիւնը մէկ սուզած ինդիքնին՝ ինքը ուղղակի միջնորդ ըլլալով ինդրուղաց համար : Այս սկզբամբ կրօնքը երկու հիման վրայ հաստատեր՝ էին՝ այսինքն մէյմը յԱն և երկրորդ 'ի միջնորդն ընդ Աստուծութիւնը մարդ . ամենեւին խառնակ և շփոթքան մը , բոլորովին հեթանոսական քողով ծածկեալ , ուսկից այնչափ տեսակ մոլար պաշտամունքներ իւրաքանչիւր աղգաց ըլմբումանը համեմատ դուրս ենան :

Քաղդէացւոց լեզուին վրայ խօսելով շատ մասամբ նմանութիւն ունի երրայականին հետ որոն մայրը կը համարուի . և նոյն խակ երայեցիք Բարելոնի գերութենէ ետքը քաղդէացւոց տառերը կը գործածէին : Բարելացւոց դիտունները և իմաստունները մասնաւոր անուամբ Քաղդէացի կ'ըսուէին , և այս անուամբ առանձին ազգ և ժողովուրդ մը կը կազմէին , տարրեր ամենեւին բարելացւոցմէ՝ եղիպատացւոց քուրմերուն պէս կեանք անցնելով : Իրենց գործը ուրիշ բան չէր բայց եթէ միշտ ուսման պարապիլ , վասն զի ամեն տեսակ քաղդէազական օրէնքներէ ու ըզբաղմունքներէ աղատ էին : Հասարակաց կարծիք է որ աստղաբաշխական գիտութեան առաջին մշակողք և յառաջացուցիչք իրենք եղած ըլլան , և

մասնաւորապէս արևուն և մոլորակաց ընթացիցը և շարժմանցը քաջ տեղեակ, բայց 'ի գիշաւորներէն՝ որոնց էութեա- նը և ընթացքին վրայ անստոյդ դադա- փար և տեղեկութիւն ունէին : Այս ծա- նօթութիւններէն կրցան իմանալ օ- րուան այլ և այլ բաժանմունքը, ա- միսը, տարին և այն : Ուզի՞ բերան ի- րենց տարին կը բաժնուէր ՅԵ օր, բայց ժամանակ անցնելով իմացան որ ան- կատար է այս իրենց հաշիւը, ուստի ա- րեգական ճիշդ բոլորման հաւասարե- լու համար ՅԵ օրուան վրայ աւելցու- ցին նաև 6 ժամ և քանի մը վայրկեան : Քաղդէացւոց աստղաբաշխական հա- շիւները մինչև ցայսօր ունինք ձեռքեր- նիս զորոնք բերեսոս, իրենց երևելի պատմազիրը կը գործածէր իր ժամա- նակագրական հաշիւներուն մէջ : Իսկ թէ իրենց դարերը ԲՆՀ շրջանով և կամ քանի տարիէ կը ձեւանար՝ անոր վրայ ստոյդ տեղեկութիւն մը չկայ :

Բայց ինչպէս որ վերը ըսկնք թէ Քաղդէացիք աստղաբաշխութեան շատ մասերուն վրայ տեղեակ էին, սակայն կար բան որ ամեննեին չէին դիտեր և կամ անստոյդ էր դիմացնին, ինչպէս օրինակի համար՝ թէպէտ վեր 'ի վերոյ մը դիտէին արեգական խաւարման պատճառը, բայց ճիշդ ժամանակը չէին դիտեր . կը պարծէին թէ քաջ աստե- ղագէտ են, և թէ իրենց աստղաբաշ- խական զննութիւններով՝ ապագան կրնան գուշակել որով և ըստ մասին՝ աւելի ևս աստեղագէտ քան թէ աստ- ղաբաշխ էին . և որ մեծն է այն մոլո- րակները զոր 'ի փառաբանութիւն ճը- մարտին Աստուծոյ կրնային համարիլ, ընդհակառակն իրենց անմիտ և մնո- տիապաշտ մոլորութեանը գործի ըրին . վասն զի կը կարծէին թէ անոնք թարգ- մանն են Արարչին կամացը, որով և անոնց կերպ կերպ փոփոխութեանցը և ազգե- ցութեանը մեծապէս հաւաստ կ'ընծա- յէին : Դարձեալ կը հաւաստային թէ մո- լորակները մարդուս ճննդեանը վրայ մեծ ազգեցութիւն կ'ընեն, և անկէ կը կարծէին գուշակել մարդուս բարիքը

կամ չարիքը որ բոլոր կենացը մէջ կը դ- նային հանդիպիլ : Մոլորակաց ելալը, մոնալը և անոնց գյոնը իրենց մի միայն գուշակութեան նիւթ էր, որով և Սուրբ գիրքն ալ Դանիէլի մարգարէութեան մէջ՝ անոնց վրայ լասելու ժամանակը Աստեղագէտ, Մոդ, կիւս և Լերդա- հմայ կ'անուանէ զիրենք :

Իրաւճնէ թէ որ այս իրենց մնոտիա- պաշտ գուշակութիւններէն ետ կենա- լով, բոլոր մոտադրութիւննին աստղա- բաշխութեան տուած ըլլային, որչափ ևս աւելի կրնային դարգանալ այս վր- սեմ գիտութեան մէջ, մինչդեռ իրենց սուր և խորը թափանցող մնացը հա- մեմատ յարմար միջոցներ շատ ունէին :

Բայց այն միջոցին երբ Քաղդէացիք իրենց աղանդոյն համեմատ աստղա- բաշխական ուաստեղագիտական զննու- թեանց զբաղած կ'աշխատէին, բուն բա- բելացիք օգտակար արուեստից և գի- տութեանց ձեռք զարնելով՝ սկսան զար- գանալ և յառաջադիմել, որով և Քաղ- դէացոցմէ աւելի՝ արժանի եղան իմաս- տուն անունը ստանալու : Բարելացիք մասնաւոր կերպով քաջ էին և հմուտ չափաբերական և ճարտարապետական արուեստից մէջ, ինչպէս որ յայտնի կը տեսնուի իրենց շինած մեծագործ պա- րիսպներէն, աշտարակներէն, պալատ- ներէն, դռներէն, կամուրջներէն ու ջր- ըանցքներէն որոնք Շամիրամայ, Դի- գոզի և ամբարտաւան Նարուգոդնո- սորայ ժամանակը շինուեցան 'ի զարդ և 'ի պարծանս Բարելոնի : Սակայն այս ամեն գովասանքներով չենք ուզեր հե- տեցնել թէ ուրեմն իրենց ամենայն ա- րուեստներուն մէջ՝ կատարելութեան ծայրն էին, վասն զի մասնաւորապէս ճարտարապետութեան մասին մէջ Յու- նաց չէին հաւասարեր զորկ ըլլալով անոնց գեղեցիկ ճարտարապետութե- նէն . և ասիկա կրնայ մէկը ստոյդ իմա- նալ թէ որ Պերսեպոլիս քաղաքին ա- մերակները տեսնելու ըլլայ, որոնք Եւ- րոպայի այլ և այլ թանգարանաց մէջ կը գտնուին : Ի վերայ այսր ամենայնի կրնանք ըսել որ երեւելի ճարտարապետ

և քաջ արուեստագէտ էին և կարծես թէ իրենց նախնիքներէն ժառանգած ըլլան այն մասնաւոր ձիրքը, սոսկավիժ-իսար և մեծակառոյց շէնքեր կանգնելու, ինչպէս որ միշտ աչքերնուոն դիմաց ունէին բնելայ իրենց նախնոյն շինած հրաշալի աշտարակը Սենաարայ դաշտին մէջ:

Մասնաւոր ճարտարութիւն ունէին մետաղ ձուլելու, կերպասը կարմրադոյն ներկելու Տիւրացոց պէս, թանկագին ու փառաւոր մետաքսէ կերպաս դործելու, տեսակ տեսակ ասղնեգործ ճոխ զգեստներ շինելու, ինչպէս նաև գեղեցիկ գորգեր և օթոցներ : Կը պատմէ Պիլինիոս որ Հոռոմայու մէջ՝ Բարելական սեղանածածկոյթ մը ուզմ հարիւր հազար Հոռվմէական արծաթոյ ծախուեցաւ : Այս ամեն բաներէն կրնանկը յառաջ բերել որ երաժշտութեան ուսմունքն ալ իրենց համար անծանօթ չէր, ինչպէս որ Դանիէլ մարդարէն ալ կը վկայէ ըսեկելով որ ամեն տեսակ երաժշտական գործի անպակաս ունէին . բայց գիտնալու է որ ուրիշ արուեստներուն նման երաժշտութիւնն ալ թերակատար էր մէջերնին, կամ լաւ ևս ըսել՝ մեծագոշ էր աւելի քան թէ ներդաշնակաւոր և կանոնաւորեալ :

Բարելոն երկար ատեն պահեց իր պայծառութիւնը և համբաւը նաև կիւրուին ձեռքը անցնելէն ետքն ալ և մինչ չե իր թագաւորութեան բարձումը . նոյնպէս նաև ամբողջ Պարսից թագաւորութեան ժամանակն ալ, ինչպէս նաև Աղեքսանդրի իշխանութեանը տակ և մինչև Մակեդոնացոց թագաւորութեանը սկիզբը : Բայց վերջապէս երթաւով սկսաւ նուազիլ և իյնալ իր առաջին փառքէն և մեծութենէն՝ և այն աստիճան խեղճութեան հասաւ՝ որ առաջին պայծառութեան շորքը անգամ հազիւ մնաց . և ըստ ամենայնի կատարուեցաւ Եսայեայ մարդարէին տեսիլքը Բարելացոց վրայ . վասն զի Սելեկոսի իշխանութեանը տակ Բարելոնի մեծակառոյց պարիսպները վագրներու և վայրի գաղաններու բնակարան դար-

ձան՝ զորոնկ նոյն ինքն Սելեկոս կը մնուցանէր : Ափսոս որ այն մեծակառոյց քաղաքին անուանէն զատ՝ զրեթէ ուրիշ յիշատակ մը չմաց հիմա . տէրութիւն նին բոլորովին կործանած, արուեստնին կորսուած՝ և Քաղղէական վեհ գիտութիւննին խպառ խաւարած ըլլալով : Այս մեծ թշուառութեանց պատճառ կրնանկ սեպել Նինոս ասորեստաննեայց առաջին թագաւորը որ Բարելոնի և Հայաստանի վրայ արշաւելով, ուղեց ջնջել բոլոր իրմէ առջիններուն երևելի յիշատակարանները և գործքերը, որպէս զի միայն իրեն ըրածներուն վրայ խօսելով մարդիկ՝ զինքը կարծեն սկիզբն և զարգացուցիչ ամենայնի, որով և այս իր պարսաւելի ու վատնպատակին հասնելու համար՝ հրաման տուալ որ իրեն տէրութեանը մէջ և իշխանութեանը տակ որչափ գրքեր, երևելի գործքեր և ազգաց պատմութիւններ գտնալու ըլլան՝ մէկտեղ ժողուած զամենքն ալ առանց խնայելու այրեն, ինչպէս կը վկայէ նաև մեր խորենացին (Դիբը Ա. գլ. ժԴ) : Ահա այսպիսի ցաւալի կերպով յաւեր և յապականութիւն դարձաւ Բարելոն, կորսնցնելով բոլորովին իր նախկին ճոխութիւնը և փառքը . այնպիսի փառասէր մարդու մը ձեռքը մատնուելով՝ որ անսանձ գաղանի մը պէս իր անձնական փառացը համար, հասարակաց օգտին դէմ զինեցաւ, որով և մարդարէին խօսքը լիովին կատարուեցաւ որ կ'ըսէ . «Եւ 'ի փառս քո հուր վառեալ բորբռքեսցի » . (Եսայ: գլ. ժ: 16) : Այսօրուան օրա Բարելացոց պատմութենէն քանի մը հասուած միայն ունինք ձեռքերնիս զոր գրեց Բերեսոս Քաղղէացին Բարելացոց վերջի ժամանակներուն վրայ Մեծին Աղեքսանդրէն եաքը : Այս պատմութեանը կը վկայէ նաև Յովսեպոս, որովհետև Մովսէսի գրած պատմութեանը շատ մասամբ կը միաբանէր, ինչպէս օրինակի համար՝ նախամարդոյն կյնալը, ջրէեղեղը, նոյսյ տապանը և ինչ որ անոր սերնդոցը վրայ կը պատմուին Սուրբ գրոց մէջ . Բերեսոս Քաղ-

դէացին՝ ինչպէս նաև Մանեթոն եգիպտացին իրարու ժամանակակից Քրիստոսէ 300 տարի առաջ, ուղելով բարձրացրնել և միանդասմայն հինաւուրց ցուցընել իրենց ազդին ծագումը և ըսկիզբը, սկսան անհաւատալի և բոլորովին անտեղի դէպքերը ու տարիներ հինարել որով և ճշմարիտ պատմութիւնը տակին ու վրայ ըրին իրենց առասպելաբան ստութեամբք : Քաղդէացիք մողերնին դրեր էին որ իրենց սկիզբը եզիպտացուցմէ և ուրիշ ամեն ազգերէ աւելի հին ըլլայ, և ըստ ոմանց կը կարծէին թէ հարիւր յիսուն հազար տարուան պատմութիւն ունենան, կամ ըստ այլոց՝ չրս հարիւր եօթանասուն և երեք հազար տարուան, իրենց աստղաբաշխական զննութենէն սկսեալ մինչև մեծին Աղեքսանդրի օրերը . իրաւոնէ անհեթեթ և անտեղի պահանջմունք որուն նոյն իսկ պատասխանելը յիմարութիւն կը սեպուի թող թէ հաւատքը ընծայել:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿՈՑ

Այս դարուս հրաշալի դեպքերէն մէկը կրնայ համարուիլ վենետիկեան գաւառին Աւտորիացւոյն ձեռքէն ազատումը, որ մօտ օրերս և մեր աշքին առջև պատահեցաւ: Գկայ պատմութեանց էջերուն մէջ տեղ մը ուր կարդամք, թէ ազդ մը ծովու և ցամաքի վերայ թշնամիէն յաղթուելով, ինչպէս որ եղաւ իտալացւոց Քուամոզա և Լիցցա պատերազմներուն մէջ, հարկադրէ զթշնամին իր սահմաններէն դուրս ելնել, և փոխանակ ծանր և նախատալից դաշնագրութեան, ստիպէ զթշնամին յարդար պահանջանս : Եղածը եթէ փիխառփարար քննեմք, աստուածային տեսչութեան գործ կը համարիմք քան թէ մարդկային . զի առանց կաթիլ մի արեան հեղոյ, այն քառակողմեան հըշչակաւոր բերդերը, որք են Մանթուա,

վերոնա, Փէսքիէրա և Լէնյակո, և հինգերորդը վենետիկի, անոնց թագումին, զորս յիսուն տարիէ հետէ Աւտորիայ տէրութիւնը կ'ամբացունէր, և իրաւամբանառիկ կոչուած էին 'ի հին ժամանակէ մինչև ցայժմ, ահա այս անառիկ կոչուած բերդերը առնուեցան առանց հրացան մը պարզուելու : Պարապը գնաց Աւտորիացւոյն այսչափ տարիներէ հետէ ըրած անհուն ծախքը և պատրաստութիւնը : Այն բերդերը որ իտալիոյ գրունք էին, փակեցան Աւտորիոյ դէմ, և ելաւ Աւտորիացին իտալական երկրէն, Սիկիլիայէն սկսեալ մինչև յԱլպեան լերինս, ուր կ'իշխէր 1300 տարիէ հետէ կամ ազգեցութեամբ կամ զօրութեամբ . բարձաւ հիմա բոլորովին թէ իր զօրութիւնը և թէ իր ազգեցութիւնը իտալական երկրէն : իտալիան երբէք այսպէս միացեալ և ողջանդամ եղած չէր, բայց եթէ հին Հռոմայեցւոց ժամանակ :

Արդ գննեմք հիմա թէ ինչ է այս յեղախութեանց պատճառ : Յիրաւի իտալիան պարտական է այս անգամ իր ազատութեան համար Բրուսիոյ տէրութեան, ինչպէս 58ին Գաղղիոյ տէրութեան, բայց ոչ գաղղիական աննընկուն գունդերը, և ոչ Բրուսիոյ յաղթական բանակը ազատարար եղան իտալիոյ, այլ միջնորդ կամ ձեռընտու ազատութեան երկու գլխաւոր պատճառներ կը դիմեմ . մին Աւտորիոյ ծանր հարկահանութիւնները և չափազանց խատութիւնները, երկրորդ՝ իտալիոյ քաղաքականութեանը, ազգայնութեան ողին և միութեան սէրը : Առաջնով այնչափ ատելի եղած էր Աւտորիացին իտալացւոց, որ Աւտորիացւոյ երես անգամ նայիլ չէին ուզեր, կ'ատէին զնա իրբե իրենց անհաշտ թշնամին, և կը փափագէին ազատիլ անոր հարկաւորեալ խիստ կառավարութենէն : Ուստի երբեմն երբեմն ջանացին լընկէց ըլլալ, և մանաւանդ մեր օրերը 48ին, բայց չյաղողեցան . վասն զի իրենց կողմանէ կը պակասէր երկրորդ պայմանը : Հրաշիւք իմն 48ին